ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԵԹՈՎՊԻԱՅԻ ԿԱՅՍՐ ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԼԵ ՍԵԼԱՍԻԵԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ ԵՎ ՍՏԱՅՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԸ

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԼԵ ՍԵԼԱՍԻԵ ԱՌԱՋԻՆԻՆ

ԱԴԴԻՍ-ԱԲԵԲԱ

Հաճեցեք ընդունել Մեր սրտագին շնորհավորանքները Ձերդ Վեհափառության բարեբաստիկ գահակալության 35-րդ տարեդարձի առթիվ:

Աղոթում ենք առ Աստված Ձեր քաջառողջության և արևշատության համար, ի բարօրություն Եթովպիայի ազնիվ ժողովրդի և ի փառս Ձեր հայրենիքի:

Մենք ջերմապես հիշում ենք Ձեր չքնաղ երկիրը, նրա ազնիվ և աստվածասեր ժողովրդին և Ձերդ Կայսերական Վեհափառության անխառն սիրո արտահայտությունը Հայ Եկեղեցու հանդեպ:

Մնամք սիրով և օրհնությամբ՝

ԷՋՄԻԱԾԻՆ, Նոյ. 2.

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

*

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա,
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Մեծ հաճույքով ստացանք Ձերդ Սրբության ուղերձը Մեր գահակալության տարեդարձի առթիվ և Մենք անկեղծորեն շնորհակալ ենք Ձեզ Ձեր աղոթքի և բարի զգացումների համար:

ԱԴԴԻՍ-ԱԲԵԲԱ

ՀԱՅԼԵ ՍԵԼԱՍԻԵ
ԿԱՅՍՐ ԵԹՈՎՊԻԱՅԻ